ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հայրի՛կ, բացատրի՛ր ինձ, ինչի՞ է պետք պատմությունը»: Տարիներ առաջ իր պատմաբան հորը այսպիսի հարց տվեց մի մանչուկ, որն անչափ հարազատ է ինձ: Կցանկանայի ասել, որ պատասխանս ահա այս գիրքն է, որ պիտի ընթերցենք: Քանզի գրողի համար ես չեմ պատկերացնում ավելի մեծ գովեստ, քան այն, որ նա կարող է միևնույն տոնով խոսել թե՛ ուսյալների և թե՛ դպրոցականների հետ: Նման բարձր պարզությունը, սակայն, լոկ մի քանի հազվագյուտ ընտրյալների մենաշնորհն է: Ու թեև այն պահին ինձ երևի թե չհաջողվեց լիովին բավարարել երեխայի հետաքրքրասիրությունը, բայց գոնե նրա հարցը ես սիրով կպահեմ իբրև գրքիս բնաբան: Անտարակույս, ոմանք միամիտ կհամարեն դրա ձևակերպումը: Մինչդեռ ինձ, ընդհակառակը, միանգամայն պատշաճ է թվում: Խնդիրը, որ այն առաջադրում է այդ համառ տարիքին բնորոշ կարկամեցնող չիտակությամբ, ոչ ավել ոչ պակաս, պատմության օրինականության խնդիրն է:*

---

* *Մարկ Բլոկի նշումը. «Ինչում էլ սկզբից ևեթ և առանց հատուկ միտումի հակադրվում եմ Լանգլուայի և Սենյոբոսի “Պատմական հետազոտությունների ներածությանը”: Հատվածը, որ ընթերցեցինք, վաղուց արդեն գրված էր, երբ հիշյալ աշխատության նախաբանում (էջ XII) աչքիս ընկավ “անկարևոր հարցերի” մի ցուցակ: Այնտեղ բառացիորեն նշված էր այս մեկը. “Ինչի՞ է պետք պատմությունը”: Այս հարցից, ինչպես և մեր արարքների ու մտքերի գոյության իրավունքին առնչվող գրեթե բոլոր հարցերից, անկասկած հետևում է, որ այն մարդիկ, որոնք ի բնե անտարբեր են դրանց նկատմամբ կամ գիտակցաբար որոշել են այդպիսին դառնալ, միշտ դժվարանում են հասկանալ, թե ինչպես են*

Ահա և պատմաբանը կանչված է հաշվետվության: Նա կխիզախի անշուշտ, բայց ոչ առանց ներքին սարսուռի. իր արհեստում ճերմակած ո՞ր մի վարպետն է, որ սրտի ծակոց չի ունեցել այն հարցից, թե՝ ողջամի՞տ է արդյոք ինքն օգտագործել իր կյանքը: Բայց այս քննարկումը շատ ու շատ վեր է արհեստակցական բարոյականության [մանր-մունը] երկմտանքներից: Այն շոշափում է ողջ մեր արևմտյան քաղաքակրթությունը:*

Քանզի, ի տարբերություն մշակութային այլ տիպերի, վերջինս միշտ էլ մեծ սպասելիքներ է ունեցել իր հիշողությունից: [Ամեն ինչ դրան էր բերում՝ թե՛ քրիստոնեական, թե՛ անտիկ ժառանգությունը: Հույներն ու լատինները՝ մեր առաջին ուսուցիչները, պատմագիր ժողովուրդներ էին: Եվ քրիստոնեությունն էլ պատմաբանների կրոն է: Կրոնական այլ համակարգեր կարողացան իրենց հավատալիքներն ու ծեսերը հիմնել մարդկային ժամանակը գրեթե զանցող դիցաբանության վրա. մինչդեռ քրիստոնյաների Սուրբ Գիրքը պատմական գիրք է, նրանց Պատարագները Աստծո երկրային կյանքի դրվագների հետ հիշատակում են

ուրիշները խորհրդածության դրավիչ նյութ գտնում դրանցում: Այդուհանդերձ, քանի որ առիթն այսպես է ներկայացել, լավ է՝ այժմ ևեթ ամրագրեմ իմ դիրքորոշումը հիրավի հանրաճանաչ մի աշխատության հանդիման, որին գիրք՝ կառուցված, ի դեպ, բոլորովին այլ նախագծով և իր որոշ բաժիններում նվազ ծավալուն, դույզն իսկ չի հավակնում փոխարինելու: Ինքս աշակերտել եմ այդ երկու հեղինակներին, հատկապես պարոն Սենյոբոսին, և արժանացել թե՛ մեկի, թե՛ մյուսի անգնահատելի բարեհաճությանը: Նախնական կրթությանս համար մեծապես պարտական եմ նրանց դասավանդմանն ու գործին: Բայց նրանք ոչ միայն սովորեցրել են մեզ, որ պատմաբանն առաջին հերթին պիտի անկեղծ լինի, այլ ավելին՝ չեն թաքցրել, որ մեր ուսումնասիրությունների առաջընթացը արդյունք է գիտության մշակների իրարահաջորդ սերունդների անխուսափելի հակասության: Ուրեմն ես հավատարիմ կմնամ ուսուցիչներիս դասերին, անկաշկանդ քննադատելով նրանց այնտեղ, ուր օգտակար կհամարեմ, քանի որ ուզում եմ, որ մի օր էլ իմ սաները, իրենց հերթին, քննադատեն ինձ»:

**]որքան էլ դրանք հարգելի լինեն[*

նաև Եկեղեցու և սրբերի տարեգրությունները: Քրիստոնեությունը պատմական է նաև այլ՝ թերևս ավելի խորքային իմաստով. Մեղսագործության և Ահեղ Դատաստանի միջև կարգված մարդկության ճակատագիրը, քրիստոնեության պատկերացմամբ, մի երկար արկած է, որի արտացոլանքը ներկայացնում է ամեն անհատական կյանք, ամեն մասնավոր «ուխտագնացություն» իր հերթին. հենց տևողության, ուստի և պատմության մեջ է ընթանում Մեղքի և Քավության մեծագույն դրաման՝ քրիստոնեական ամենայն խոկման կենտրոնական առանցքը: Մեր արվեստը, մեր գրական կոթողները լեցուն են անցյալի արձագանքներով. մեր գործիչների շուրթերից չեն իջնում անցյալի դասերը՝ իրական թե մտացածին:

Անկասկած, տեղին կլինի նշել խմբային հոգեբանությունների տարբերության մի քանի նրբերանգ: Կուռնոն[1] վաղուց նկատել է, որ ֆրանսիացիները, միշտ հակված լինելով վերակառուցելու աշխարհն ըստ բանականության գծերի, մեծ մասամբ նվազ ուժգնությամբ են վերապրում իրենց հավաքական հիշողությունները, քան ասենք գերմանացիները: Կասկածից վեր է նաև, որ քաղաքակրթությունները կարող են փոփոխվել: Եվ, ըստ էության, աներևակայելի չէ, որ մեր քաղաքակրթությունը օրերից մի օր երես թեքի պատմությունից: Խելամիտ կլիներ, եթե պատմաբանները խորհեին այդ մասին: Վատ ըմբռնված պատմությունը, եթե զգոն չլինենք, կարող է ի վերջո վարկաբեկել նաև լավ հասկացվածը: Բայց եթե երբևէ պիտի գանք դրան, ապա միայն մեր իմացական ամենամնայուն ավանդույթներից կտրուկ հեռանալու գնով:

Այս առումով մենք տակավին խղճի քննության փուլում ենք: Ամեն անգամ, երբ հարատև աճի ճգնաժամ ապրող մեր տխուր հասարակությունները սկսում են կասկածել իրենք իրենց, հարց են տալիս, թե իրավացի՞ էին, երբ իրենց անցյալն էին հարցաքննում, կամ լա՞վ են արդյոք հարցաքննել: Կարդացեք, թե ինչ էր գրվում պատերազմից

առաջ և ինչ կարող է դեռ գրվել այսօր]. Ներկայիս անորոշ տագնապների խառնահունչ ձայների մեջ դուք գրեթե անվրեպ կզանազանեք այդ տագնապի ձայնը: Ինձ վիճակվեց որսալ դրա [բոլորովին] անմիջական արձագանքը ողբերգության ամենաթեժ պահին: 1940 թ. հունիսն էր[2], եթե հիշողությունս չի դավաճանում՝ նույն այն օրը, երբ գերմանացիները մտան Փարիզ: Նորմանդական պարտեզում, որտեղ տեղակայված զորագուրկ մեր շտաբը պարապուրդի էր մատնված, մենք շարունակ աղետի պատճառներն էինք որոճում: «Պետք է կարծել, թե պատմությունը խաբե՞լ է մեզ»,– մրմնջաց մեզնից մեկը: Այդպես, հասուն տղամարդու անձկությունը, առավել դառը շեշտով, ձայնակցում էր պատանյակի պարզ հետաքրքրասիրությանը: Անհրաժեշտ է պատասխան տալ թե՛ մեկին, թե՛ մյուսին:

Ի դեպ, դեռ հարկավոր է պարզել, թե ինչ է նշանակում այդ «պետք» բառը:

*Արդարև, եթե նույնիսկ պատմությունը ոչ պիտանի նկատվեր այլ ծառայությունների առումով, ապա հօգուտ նրա կմնար ընդգծել, որ նա զվարճալի է: Կամ, ավելի ճիշտ,– քանզի ամեն ոք իր զվարճանքը փնտրում է**՝ *ուր իր սիրտն է ուզում,– որ շատերին նա անկասկած հենց այդպիսին է թվում***: *Ինձ անձամբ, որքան ինձ հիշում եմ, նա միշտ էլ անչափ զվարճացրել է: Ինչպես և, կարծեմ թե, բոլոր պատմաբաններին: Այլապես ինչո՞ւ պիտի հենց այս մասնագիտությունն ընտրեին: Ամեն ոք, եթե միայն կատարյալ հիմար չէ, հետաքրքիր կհամարի բոլոր գիտությունները:*

---

*]այնտեղ[

** *Հավանաբար տեքստի այս հատվածում պետք է գետեղել Մարկ Բլոկի հետևյալ նշումը. «Accessiones Historicae (1700), Նախաբան. Opera, Dutens հրատ., IV–2 հատոր, էջ 55. "Tria sunt quae expetimus in Historia: primum, voluptatem noscendi res singulares; deinde, utilia in primis vitae praecepta; ac denique origines praesentium a praeteritis repetitas, cum omnia optime ex causis noscantur".»*[3]:

Բայց ամեն գիտնական դրանց միջից կգտնի այն միակը, որով զբաղվելն իրեն զվարճություն կպատճառի: Հայտնաբերել այն նվիրվելու համար. ահա թե որն ենք մենք, փաստորեն, կոչում համարում:

Ի դեպ, պատմության այդ անուրանալի գրավչությունն ինքնին արժանի է խորհրդածության:

Դրա դերը՝ իբրև սաղմ և խթան, եղել և մնում է առաջնային: Ճանաչողության փափագին նախորդում է պարզապես քիմքը, իր նպատակները լիովին գիտակցող գիտության աշխատանքին՝ ընազդը, որն առաջնորդում է դեպի այդ նպատակները. մեր իմացական վարքի էվոլյուցիան լի է այս տեսակ հերթագայություններով: Նույնիսկ ֆիզիկան իր առաջին քայլերը մեծապես պարտական է «զարմանքի սենյակներին»[4]: Տեսանք նաև, թե ինչպես հնահավաքության փոքրիկ ուրախություններից ծնունդ առան ուսումնասիրության մի քանի ուղղություններ, որոնք հետզհետե լրջություն ձեռք բերեցին: Այդպես ծնվեցին հնէաբանությունը և ժամանակի առումով մեզ ավելի մոտ ֆոլկլորագիտությունը: Գուցե Ալեքսանդր Դյումայի[5] ընթերցողներն էլ հնարավոր պատմաբաններ են, որոնք պարզապես վարժված չեն մաքուր և, կասեի, ավելի սուր հաճույքի՝ իրականի հաճույքին:*

*Եվ, մյուս կողմից, այդ գրավչությունն ամենևին չի կորչում, երբ ձեռնարկվում է մեթոդական փնտրտուքը՝ անհրաժեշտ ողջ խստությամբ հանդերձ. այդ ժամանակ, ընդհակառակը,– բոլոր [իսկական] պատմաբանները կարող են վկայել,– այն դառնում է ավելի վառ ու լեցուն, և այստեղ աներկբայորեն չկա ոչինչ, որ արժանի չլինի ցանկացած մտավոր աշխատանքի**: Կասկածից վեր է, սակայն, որ պատմությունն ունի և իր ուրույն էսթետիկական հաճույքները, որոնք նման չեն ոչ մի ուրիշ գիտության*

**]նախևառաջ[*

***] Ճարտարորեն արված ամեն մտավարժանք մի՞թե յուրովի արվեստի գործ չէ:[*

հաճույքների: Բանն այն է, որ նրա մասնահատուկ առարկան կազմող մարդկային գործունեությունների տեսարանը անասելի գրավիչ է մարդու երևակայության համար: Մանավանդ, որ դրանց հայտածումը, ժամանակի և տարածության հեռվության շնորհիվ, ձեռք է բերում արտասովորի անորսալի հրապույրներ: Մեծն Լայբնիցն[6] ինքն է դա խոստովանել. երբ մաթեմատիկական կամ թեոդիցեական հայեցողություններից անցնում էր հին հրովարտակների կամ կայսերական Գերմանիայի վաղեմի տարեգրությունների վերծանման, նա էլ ճիշտ մեզ նման ապրում էր «հազվագյուտ բաներ իմանալու հրճվանքը»: Զգույշ լինենք, որ չզրկենք մեր գիտությունը պոեզիայի իր բաժնից: Զգույշ լինենք հատկապես, որ չամաչենք դրանից, քանզի ոմանց մոտ նկատել եմ նման զգացում: Զարմանալի հիմարություն կլիներ կարծել, թե զգացական այդպիսի հզոր ներգործություն ունենալու համար պատմությունը պետք է նվազ ունակ լինի բավարարելու մեր միտքը:

Եթե այդուհանդերձ պատմությունը, որն առինքնում է մեզ գրեթե ընդհանրաբար զգալի մի հմայքով, հանուն ինքնարդարացման ունենար գեթ իրեն, եթե նա, վերջին հաշվով, լիներ սոսկ ցանկալի ժամանց, ինչպես բրիջը կամ ձկնորսությունը, մի՞թե արժանի կլիներ բովանդակ ջանքին, որ գործադրում ենք այն գրելու համար: Գրելու, ասել է թե՝ ազնվորեն, ճշմարտացիորեն գրելու, ըստ կարելվույն բացելով թաքուն դրդապատճառները, ասել է թե՝ դժվարությամբ գրելու: Խաղն այլևս անթույլատրելի է մեզ այսօր, նշել է Անդրե Ժիդը[7], բացի մտքի խաղերից, հավելել է նա: Սա ասվել է 1938-ին: Որքան ավելի ծանրակշիռ իմաստ է ձեռք բերում այս խոսքը 1942-ին, երբ գրում եմ ես՝ իմ հերթին: Աշխարհում, որը նորերս հասու է դարձել ատոմի քիմիային և ձեռնամուխ է լինում աստեղային հեռաստանների գաղտնիքները պեղելուն, իր գիտությամբ իրավացիորեն հպարտ մեր այս խեղճ աշխարհում, որն ընդսմին անկարող է մի քիչ

երջանկություն արարել իր համար, պատմական էրուդիցիայի երկարաձիգ բոպենները, որոնք միանգամայն ունակ են ողջ կյանքը կլանելու, վստահաբար արժանի կլինեին դատապարտման, իբրև ուժերի հանցավորության աստիճան անհեթեթ վատնում, եթե լոկ պիտի հանգեցնեին մեր զվարճանքներից մեկը դույզն-ինչ ճշմարտությամբ բարեզարդելուն: Կա՛մ հարկ կլինի հետ պահել պատմությամբ զբաղվելուց բոլոր այն ուղեղներին, որոնք կարող են ավելի լավ գործադրվել ուրիշ բնագավառներում, կա՛մ էլ պատմությունը որպես գիտություն պիտի փաստի իր մաքուր խիղճը:

Բայց այստեղ էլ մի նոր հարց է ծառանում. ի՞նչն է ըստ էության կազմում մտավոր ճիգի օրինականությունը:

Կարծում եմ՝ մեր օրերում այլևս ոչ ոք չի համարձակվի պնդել, ինչպես առավել խստապահանջ պոզիտիվիստները, թե հետազոտության արժեքը ամեն ինչում և ամեն ինչի համար չափվում է գործադրման պիտանիությամբ: Ինչպես փորձն է սովորեցրել, անկարելի է կանխավ որոշել, թե արտաքուստ ամենից անշահախնդիր մտահայեցությունները օրերից մի օր չեն դառնա զարմանալիորեն օգտակար՝ գործնականում: Եվ հետո, մերժել բարեկեցիկ գոյության հոգսերից անդին իր մտավոր քաղցը հագեցնելու մարդկության ձգտման իրավունքը՝ կնշանակեր անօրինակ խեղման ենթարկել նրան: Թող որ homo faber-ն ու politicus**-ը մշտնջենապես անտարբեր մնան պատմության հանդեպ, ի պաշտպանություն վերջինիս բավական կլինի և այն համարումը, որ նա անհրաժե՛շտ է homo-sapiens***-ի լիակատար ծաղկման համար: Հարցը, սակայն, նույնիսկ այսկերպ սահմանափակված, անմիջապես չի լուծվել:*

Մեր բանականությունն ի բնե ավելի հակված է հասկանալու, քան իմանալու: Հետևաբար, ըստ նրա, իսկական են լոկ այն գիտությունները, որոնք հաջողում են բացատրա-

---

* *Վարպետ (ստեղծող) մարդ (Ծ.Թ.)*

** *Քաղաքական մարդ*

*** *Բանական մարդ*

կան կապեր հաստատել երևույթների միջև: Մնացյալը, ինչպես արտահայտվել է Մալբրանշը[8], ամենագետություն է: Իսկ ամենագետությունը կարող է միայն զվարճանք կամ մոլություն լինել, և ինչպես Մալբրանշի ժամանակներում, պատմությունը այսօր էլ հազիվ թե մտքի լավ գործ համարվի: Ուստի, անկախ նույնիսկ իր հնարավոր կիրառականությունից, պատմությունը իրավունք կունենա իր տեղը վիճարկելու մտավոր ճիգին իսկապես արժանի գիտությունների շարքում լոկ այն չափով, ինչ չափով որ պարզունակ՝ անկապակից ու գրեթե անվերջանալի թվարկման փոխարեն, մեզ կխոստանա ռացիոնալ դասակարգում և հարաճուն դյուրըմբռնելիություն:

Սակայն անժխտելի է, որ որևէ գիտություն միշտ ինչոր առումով պակասավոր պիտի թվա, եթե վաղ թե ուշ չծառայի մեր բարօրությանը: Իսկ ինչպե՞ս չտածենք այդ զգացումը առավել սաստկորեն հենց պատմության նկատմամբ, չէ՞ որ նա կարծես հստակ նախասահմանված է գործելու ի շահ մարդու, քանզի հենց մարդն ու իր արարքներն են նրա առարկան: Հիրավի, առնվազն բնազդի համարժեք վաղնջական մի հակում դրդում է մեզ պատմությունի՛ց պահանջելու միջոցներ մեր արարքների ուղղորդման համար: Իսկ հետո, երբ հանկարծ նա անզոր է գտնվում հայթայթել դրանք՝ վրդովվելու նրա դեմ, ինչպես այն պարտված զինվորը, որի խոսքերը հիշատակեցի: Պատմության օգտակարության խնդիրը իր նեղ՝ օգտակար բառի «կիրառական» իմաստով չպետք է շփոթվի նրա օրինականության զուտ իմացական խնդրի հետ: Այն, ի դեպ, կարող է ծագել լոկ երկրորդ հերթին. չէ՞ որ խելամտորեն գործելու համար նախ հարկավոր է հասկանալ: Բայց այս խնդիրը նույնպես չպիտի շրջանցվի, եթե անգամ ողջամտության ամենահրամայական ցուցումներին միայն կիսով չափ պատասխանելու լինենք:*

---

*]քիչ առաջ[

Մեր խորհրդատուներից կամ այդ դերի հավակնորդներից ոմանք արդեն պատասխանել են այս հարցերին: Անշուշտ, լոկ մեր հույսերը հողմացրիվ անելու համար: Ամենից հանդուրժողներն ասացին՝ պատմությունը զուրկ է թե՛ օգուտից, թե՛ հիմնավորությունից: Այլք, որոնց խստությունը չափ չի ճանաչում, հայտարարեցին՝ այն վտանգավոր է: «Մտքի քիմիայի մշակած ամենավտանգավոր արգասիքը»,– ահա թե ինչպես արտահայտվեց նրանցից մեկը[, որը բնավ էլ անհայտներից չէր][9]: Այսօրինակ դատավճիռները մի սարսափելի գրավչություն ունեն. դրանք կանխավ արդարացնում են անգիտությունը: Բարեբախտաբար մեր մեջ դեռ մի բան մնացել է ոգու հետաքրքրասիրությունից, ինչն էլ, թերևս, հնարավոր է դարձնում դրանց բողոքարկումը:

Եթե, սակայն, քննությունը պիտի շարունակվի, հարկ է, որ այն հիմնվի առավել ստույգ տվյալների վրա:

Քանզի կա նախագուշություն ասվածը, որը ակնհայտորեն ծանոթ չէ պատմության շարքային զրպարտիչներին: Նրանց ճառերում ո՛չ պերճախոսության պակաս կա, ո՛չ մտքի: Եվ սակայն, նրանք մեծ մասամբ մոռանում են ստույգ տեղեկանալ իրենց շոշափած նյութի մասին: Այն պատկերացումը, որ նրանք ունեն մեր ուսումնասիրությունների մասին, արհեստանոցում չի կազմվել: Դրանից ավելի շուտ հռետորության ու Ակադեմիայի հոտ է փչում, քան՝ աշխատասենյակի: Իսկ գլխավորը՝ այն իր դարն ապրել է: Այնպես որ, այդքան ավյուն, ի վերջո, երևի թե վատնվում է լոկ մի ցնորապատկեր նզովելու համար: Մեր գործն այս գրքում պիտի բոլորովին այլ լինի: Մենք փորձելու ենք չափել այն մեթոդների ստուգության աստիճանը, որոնք, ընդհուպ աննշան ու նրբին տեխնիկական մանրուքները, իրապես կիրառվում են հետազոտության մեջ: Մեր խնդիրները կլինեն հենց այն խնդիրները, որոնք պատմաբանին*

**]Ալբեր Վանդալն[10] այստեղ գուցե ճանաչեց իրեն. իսկ Պիրենը չընդունեց[*

օրավուր առաջադրում է իր իսկ նյութը: Մի խոսքով, ամենից առաջ կուզենայինք պատմել, թե ինչպես և ինչու է պատմաբանը գործադրում իր արհեստը: Հետո թող ընթերցողն ինքը որոշի՝ արժանի՞ է այն կիրառման, թե՞ ոչ:*

Ուշադիր լինենք, սակայն: Աշխատանքը, նույնիսկ այսկերպ ընկալված և սահմանափակված, սոսկ առերևույթ կարող է պարզ թվալ: Այն կարող էր պարզ լինել, եթե մեր առջև ունենայինք կիրառական արվեստներից մեկնումեկը, որոնց մասին հնարավոր է բավարար չափով հաշվետու լինել՝ իրար ետևից թվարկելով նրանց՝ ժամանակի փորձությունը բռնած հնարքները: Բայց պատմությունը ո՛չ ժամագործություն է, ո՛չ էլ կահույքագործություն: Այն ավելի լավ ճանաչելուն միտված ջանք է, հետևաբար և շարժման մեջ գտնվող մի բան: Սահմանափակվել որևէ գիտության առկա վիճակի նկարագրությամբ՝ կնշանակի միշտ ինչ-որ չափով դավաճանել նրան: Շատ ավելի կարևոր է ասել, թե ինչպիսին է այն ակնկալում դառնալ աստիճանաբար: Ուստի նման ձեռնարկը վերլուծաբանից անխուսափելիորեն պահանջում է անձնական ընտրության բավական մեծ չափաբաժին: [Հիրավի, ամեն գիտություն իր յուրաքանչյուր փուլում մշտապես ենթարկվում է տարբեր միտումների ներթափանցման, որոնք անհնար է միմյանցից տարանջատել, առանց ապագայի որոշ կռահման:] Մենք մտադիր չենք ընկրկելու նման անհրաժեշտության առջև: Մտքի ոլորտում, ոչ պակաս, քան որևէ այլ ասպարեզում, պատասխանատվության երկյուղը հանձնարարելի զգացում չէ: Բայցևայնպես, ի սեր ազնվության զգուշացնում ենք ընթերցողին այդ մասին:

Բացի այդ, դժվարությունները, որոնց անխուսափելիորեն բախվում է մեթոդների ամեն ուսումնասիրություն, շատ տարբեր են լինում՝ կախված այն կետից, ուր տվյալ

**]. Իհարկե՝ եթե գործին ձեռք զարնելիս նա գոնե մի քիչ զինվի քննադատական հայեցողության ոգով, առանց որի, ճիշտն ասած, խնդիր չի էլ լինում: Երկու բան է հարկավոր գիտական գործի համար՝ նյութ և մարդ:[*

պահին հասած է լինում յուրաքանչյուր գիտակարգ իր զարգացման միշտ փոքր-ինչ ընդհատուն կորագծի վրա: 50 տարի առաջ՝ Նյուտոնի միանձնյա իշխանության օրոք, իմ պատկերացմամբ, այսօրվա համեմատությամբ անսովոր կերպով հեշտ է եղել կազմել մեխանիկայի շարադրանքը, [ընդ որում՝] գծագրային ճշգրտությամբ: Իսկ պատմությունը դեռևս այնպիսի փուլում է, որը շատ անբարենպաստ է ստուգությունների համար:

Քանզի պատմությունը սոսկ ընթացքի մեջ գտնվող գիտություն չէ: Այն նաև իր մանկությունն ապրող գիտություն է, ինչպես բոլոր այն գիտությունները, որոնց առարկան ռացիոնալ ճանաչողության դաշտում ուշացած մարդկային ոգին է: Կամ ավելի լավ կլինի ասել՝ պատումի սաղմնային ձևն ընդունած մի զառամյալ, որ երկար ծանրաբեռնված է եղել պատրանքներով, էլ ավելի երկար կառչել է ամենաանմիջականորեն ընկալելի իրադարձություններից, իսկ որպես վերլուծության հիմնավորված ձեռնարկ լրիվ մանուկ է մնացել: Պատմությունը վերջապես ջանում է թափանցել մակերեսային փաստերի տակ և առասպելի կամ հռետորաբանության հմայքները վանելուց հետո՝ դուրս թափել ողջամտությամբ քողարկված սովորական էրուդիցիայի ու էմպիրիզմի թույնը, որը շատ ավելի վտանգավոր է այսօր: Այն դեռ առաջին վարանոտ քայլերն է անում իր մեթոդի ինչ-ինչ կարևոր խնդիրներ շոշափելու ուղղությամբ: Եվ հենց այս պատճառով էլ Ֆյուստել դը Կուլանժը, իսկ նրանից առաջ դեռ Բեյլը[11], անշուշտ այնքան էլ չէին սխալվում՝ ասելով, որ պատմությունը «դժվարագույնն է բոլոր գիտություններից»:*

---

* *Հավանաբար հենց այստեղ պիտի գետեղվի Մարկ Բլոկի հետևյալ նշումը. «Պոլ Գիրոյի[12] մեջբերումը Ֆյուստել դը Կուլանժից, Բեյլ, Բառարան, հոդված "Ռընո". "Պատմությունը առհասարակ դժվարագույնն է բոլոր այն շարադրանքներից, որ հեղինակը կարող է ձեռնարկել, կամ դժվարագույններից մեկը"» (և Մարկ Բլոկի ձեռքով արված մի հակիրճ նշում՝ «հարկ է ստուգել»):*

[Այնուամենայնիվ, մոլորություն չէ՞ արդյոք դա: Որքան էլ մեր ուղին շատ հարցերում անորոշ լինի, ինձ թվում է՝ ներկայիս մեր դիրքը, մեր անմիջական նախորդների համեմատությամբ, ավելի բարենպաստ է փոքրիշատե հստակ տեսնելու համար:

Մեզ նախորդած սերունդները XIX դ. վերջին տասնամյակներից մինչև XX դ. առաջին տարիները ապրեցին ասես զգայախաբ եղած ֆիզիկական աշխարհի գիտությունների խիստ կարծր, հիրավի կոնտյան պատկերով: Տարածելով այդ հեղինակավոր սխեման հոգևոր ձեռքբերումների ամբողջության վրա, նրանք կարծում էին, թե չի կարող լինել իսկական գիտություն, որը չհանգեցնի միանգամից անհերքելի ապացույցների և հրամայաբար ընդհանրական օրենքի տեսքով ձևակերպված ստուգությունների: Եվ սա գրեթե միահամուռ կարծիք էր: Բայց կիրառվելով պատմական հետազոտություններում, այն, խառնվածքներից կախված, ծնունդ տվեց երկու հակադիր միտումների:

Ոմանք իսկապես հնարավոր էին համարում մարդկային էվոլյուցիայի գիտության հիմնումը, որը կհամապատասխաններ որոշ իմաստով համագիտական այդ իդեալին, և անմնացորդ նվիրումով աշխատում էին ստեղծել այն. ի դեպ՝ անգամ խիստ մարդկային, բայց ռացիոնալ որևէ գիտելիքի անհուսորեն չտրվող, ինչպես նրանք էին կարծում, շատ իրողություններ մարդկանց մասին այդ իմացության հասանելիությունից մեկընդմիշտ դուրս թողնելու գնով: Եվ այդ թափոնը այն էր, ինչ նրանք արհամարհանքով կոչում էին իրադարձություն. դա նաև անհատական ամենաինտիմ կյանքի մեծագույն մասն էր: Ընդհանուր առմամբ այդպիսին էր Դյուրկհայմի հիմնած սոցիոլոգիական դպրոցի դիրքորոշումը: Անշուշտ, եթե հաշվի չառնենք այն մեղմացումը, որ առավել խելամիտները հետզհետե հաղորդեցին սկզբունքների նախնական կոշտությանը, որպեսզի թեկուզ ակամա չենթարկվեն հանգամանքների ճնշումին: Մեր ուսումնասիրությունները շատ բանով պարտական են այդ

մեծ ճիգին: Այն մեզ սովորեցրեց ավելի խորությամբ վերլուծել, առավելագույնս մոտենալ խնդիրներին և չմտածել, կհամարձակվեի ասել, էժան բաների մասին: Այդ դպրոցն այստեղ կհիշվի միմիայն անսահման երախտագիտությամբ ու հարգանքով: Եվ եթե այսօր այն գերազանցված է թվում, ապա մտավոր բոլոր հոսանքները իրենց արգասավորության համար վաղ թե ուշ հենց այդպես են հատուցում:

Մինչդեռ ուրիշ ուսումնասիրողներ նույն այդ ժամանակ բոլորովին այլ դիրք բռնեցին: Չհաջողելով խցկել պատմությունը ֆիզիկական օրինաչափությունների շրջանակների մեջ, և, ի լրումն դրա, առանձնակի սրտնեղելով,— պատճառը իրենց նախնական կրթությունն էր,— դժվարություններից, կասկածներից, վավերագրերի քննադատությանը կրկին ու կրկին վերադառնալու անհրաժեշտությունից, նրանք այս բացահայտումներից նախևառաջ սթափ խոնարհության դաս քաղեցին: Գիտակարգը, որին իրենց տաղանդն էին նվիրաբերել, ի վերջո նրանց անընդունակ թվաց թե՛ ներկայում հավաստի եզրահանգումներ անելու, թե՛ ապագայում առաջընթացի լայն հեռանկարներ բացելու համար: Ի դեմս պատմության նրանք հակված էին տեսնելու ավելի շուտ էսթետիկական խաղի կամ, լավագույն դեպքում, ոգու առողջությանը նպաստող հիգիենիկ վարժության նման մի բան, քան իսկապես գիտական ճանաչողություն: Նրանց երբեմն անվանում էին «պատմող պատմաբաններ». անարգական ծաղրանուն մեր ընկերակցության համար, քանզի դրանով պատմության էությունը կարծես հանգեցվում էր նրա կարողությունների ինքնին ժխտմանը: Ինչ վերաբերում է ինձ, ես ավելի արտահայտիչ մի հավաքական նշան կգտնեի նրանց համար ֆրանսիական մտքի զարգացման այդ փուլում, որին նրանք կապվում են:

Սիրալիր և խուսափուկ Սիլվեստր Բոննարը[13] ժամանակավրեպություն է, եթե իհարկե հիմք ընդունենք այն ժամանակները, որ գիրքն է վերագրում նրա գործունեությանը. ճիշտ ինչպես հնադարի սրբերը, որոնց Միջնադարի

գրողները միամտաբար իրենց սեփական ժամանակին բնորոշ գույներով էին նկարագրում: Սիլվեստր Բոննարին (եթե գեթ մի պահ հավատալու լինենք այդ մտացածին կերպարի մարմնավոր գոյությանը), Առաջին կայսրության[14] օրոք ծնված իսկական Սիլվեստր Բոննարին ռոմանտիկ պատմաբանների երևելի սերունդը դեռ կարող էր իրենը համարել. նա կկիսեր վերջիններիս զգայացունց ու բեղուն խանդավառությունը, պատմության «փիլիսոփայության» ապագայի նրանց մի քիչ միամիտ հավատը: Մի կողմ թողնենք ժամանակաշրջանը, որին ենթադրաբար պիտի պատկաներ Բոննարը, և վերադարձնենք նրան այն ժամանակները, երբ գրվել է այդ երևակայական կենսագրությունը: Նա արժանի կլիներ հանդես գալու իբրև հովանավոր և համքարային սուրբ՝ իր կենսագրի համարյա թե մտավորական ժամանակակիցները եղած պատմաբանների մի ամբողջ խմբի համար. խորապես պարկեշտ, բայց փոքր-ինչ կարճաշունչ աշխատավորներ, որոնք երբեմն ասես ռոմանտիզմի պատմական մեծ խրախճանքների խոնջանքն են կրում իրենց ոսկորներում, ինչպես այն երեխաները, որոնց հայրերը չափից շատ են տրվել զվարճանքների. նարնք հակված էին իրենք իրենց զգալիորեն ցածրացնելու լաբորատորիայի եղբայրակիցների առջև և ցանկանում էին, ընդհանուր առմամբ, հորդորել մեզ ավելի շուտ զգուշավորության, քան եռանդուն մղումի: Զարմանալի՞ չի՞ նկատվի արդյոք նրանց նշանաբանը փնտրել այն զարմանալի խոսքերում, որ մի օր հնչեցին իմ թանկագին ուսուցիչ Շառլ Սենյոբոսի, ընդսմին սուր մտքի տեր մարդու շուրթերից. «Հարցեր առաջադրելը շատ օգտակար է, բայց պատասխանելը՝ խիստ վտանգավոր»[15]: Սա պարծենկոտի խոսք չես համարի անշուշտ: Բայց եթե ֆիզիկոսներն էլ ավելի ու ավելի համարձակ չգտնվեին, ո՞ւր հասած կլիներ հիմա ֆիզիկան:

Այսպիսով, մեր մտավոր մթնոլորտն այլևս նույնը չէ: Գազերի կինետիկ տեսությունը, Այնշտայնի մեխանիկան, քվանտային տեսությունը խորապես փոխել են այն պատկե-

բացումը, որ դեռ երեկ յուրաքանչյուրն ուներ գիտության մասին: Անշուշտ չեն փոքրացրել, այլ ճկուն են դարձրել այն: Շատ դեպքերում աներկբայելին փոխարինել են անվերջ հնարավորով, ճշգրտորեն չափելին՝ չափի հավերժ հարաբերականության հասկացությամբ: Դրանց ազդեցությունը զգալի եղավ նույնիսկ այն բազմաթիվ ուղեղների վրա,– պիտի, ավա՜ղ, ինձ էլ դասեմ նրանց շարքին,– որոնց կարողությունների կամ կրթության տկարությունը թույլ չի տալիս հետևել այդ վիթխարի փոխակերպությանն այլ կերպ, քան հեռվից և մի տեսակ անդրադարձված ձևով: Այսուհետ մենք ավելի պատրաստված ենք ընդունելու, որ որևէ ճանաչողություն, թող որ անզոր՝ էվկլիդյան ապացույցներ կամ կրկնության անսասան օրենքներ բանաձևելու, կարող է, այդուհանդերձ, հավակնել գիտական կոչման: Մեզ համար շատ ավելի դյուրին է ստուգությունն ու ընդհանրականությունը աստիճանի խնդիր դարձնել: Մենք մեզ այլևս հարկադրված չենք զգում գիտելիքի բոլոր առարկաներին բնական գիտություններից փոխառված միակերպ իմացական մոդել պարտադրելու, քանզի այդ տրամաչափը բնական գիտություններում իսկ լիովին կիրառելի չէ արդեն: Մենք տակավին չգիտենք, թե հետագայում ինչ կլինեն մարդու մասին գիտությունները: Բայց գիտենք, որ լինելու համար,– անշուշտ ենթարկվելով բանականության հիմնական կանոններին,– դրանք պետք չունեն ո՛չ հրաժարվելու և ո՛չ էլ ամաչելու իրենց ինքնատիպությունից:]

Ես կուզեի, որ մասնագետ պատմաբանների մեջ հատկապես երիտասարդները վարժվեին մեր գործի այս երկմտանքների, այս մշտնջենական «ապաշխարությունների» շուրջ խորհրդածելուն: Դա կլինի մտածված ընտրությամբ սեփական ջանքերի ողջամիտ կառավարմանը նախապատրաստվելու ամենահուսալի միջոցը: Ես հատկապես կուզեի, որ ավելի ու ավելի շատ երիտասարդներ գային դեպի այս պատմությունը՝ ընդլայնված և միաժամանակ խորացող, որի

գաղափարը շատերս ենք հղացել,– և մեր շարքերն օրեցօր ստվարանում են: Եվ եթե այս գիրքը կարող է օգնել նրանց այդ հարցում, ապա կիմանամ, որ այն [բացարձակապես] ապարդյուն չի եղել: Այն, պիտի խոստովանեմ, ծրագրային մաս է բովանդակում:

*Սակայն ես չեմ գրում բացառապես, ոչ էլ նույնիսկ հատկապես, արհեստանոցի ներքին կիրառման համար: Սովորական հետաքրքրասերներից էլ, ըստ իս, չպիտի ծածուկ պահվեն մեր գիտության վարանումները: Դրանք մեր արդարացումն են: Ավելին՝ դրանք թարմություն են հաղորդում մեր ուսումնասիրություններին: Մենք ոչ միայն իրավունք ունենք ներողամտություն հայցելու պատմության համար, ինչը պատշաճում է բոլոր սկիզբներին: Անավարտը, եթե մշտապես ձգտում է գերազանցել ինքն իրեն, դույզն-ինչ հրայրքոտ մտքի համար նույն գրավչությունն ունի, ինչ կատարելագույն արդյունքը: Լավ մաճկալին վարուցանքը նույնքան սիրելի է, որքան հունձքը, այսպես կամ մոտավորապես այսպես է ասել Պեգին:**

Հարկ է, որ այս կարճառոտ ներածականս ավարտեմ մասնագիտական մի խոստովանությամբ: Յուրաքանչյուր գիտություն, առանձին վերցված, այլ բան չէ, քան ճանաչողության միտված համընդհանուր շարժման մի հատված: [Արդեն առիթ ունեցել եմ դրա օրինակը բերելու.] հետազոտական իր հնարքները, թեկուզ առերևույթ ամենամասնավոր, լավ հասկանալու և գնահատելու համար, նա պիտի [կարողանա միանգամայն հուսալիորեն] աղերսել դրանք այլ գիտակարգերում համաժամանակ դրսևորվող միտումների ամբողջության հետ: Ինքնին մեթոդների ուսումնասիրությունը յուրովի կազմում է մի մասնագիտություն, որը գործադրողներն իրենց փիլիսոփա են անվանում: Այս կոչմանը

---

* *Առաջին խմբագրության մեջ այստեղ եղել է մի հատված, որը վերջնական խմբագրության մեջ տեղափոխվել է առաջին գլուխ:*

ես իրավասու չեմ հավակնելու: Նախնական կրթությանս այդ բացի պատճառով սույն ակնարկն, անտարակույս, շատ բան է կորցրել ինչպես լեզվի ճշգրտության, այնպես էլ մտահորիզոնի լայնության առումով: Ինձ մնում է այն առաջարկել ինչպես որ կա՝ իբրև վարպետի հուշատետր, որը միշտ սիրել է խորհրդածել իր հանապազօրյա գործի շուրջ, կամ ենթավարպետի ծոցատետր, որը տարիներ ի վեր չափաճող ու հարթաչափ է գործածել՝ առանց իրեն մաթեմատիկոս երևակայելու:*

---

* *Մարկ Բլոկի նշումը. «Թերևս ավելորդ չի լինի, եթե ներողության մի հայց էլ հավելեմ. իմ այժմյան կյանքի հանգամանքները, որևէ մեծ գրադարանի հասու լինելու անկարությունս, գրքերիս կորուստը ստիպում են ինձ առավելապես ապավինել իմ գրառումներին ու փորձառությանը: Ես հիմնականում զրկված եմ հավելյալ ընթերցանության ու ճշգրտումների իրավունքից, որ պահանջում են այս գործի օրենքները, գործ, որի պրակտիկան մտադիր եմ ներկայացնել: Կտրվի՞ ինձ արդյոք հնարավորություն մի օր լրացնելու այդ բացերը: Վախենամ՝ լիովին երբեք: Այսպիսով, ես կարող եմ լոկ ներողամտություն հայցել. անշուշտ կասեի՝ "ինձ մեղավոր եմ ճանաչում", եթե դա չնչանակեր արդարության դեմ մեղանչելով ստանձնել ճակատագրի սխալները»:*